Գերամեծար գերյարգելի Արքայծոր մերոյ և բարեմապետի
Տեառն Տեառն Մտեփաննոսի վարդապետի խնդալ ի տէր

... ի սեպտեմբերի 2, եղև շարժ մեծ ի ստամպօլ (յայն օր գրեթէ ոչ բնաւ դադարեցաւ) և կործանեցան և փլան քեաւկիրպինայք. եյտի խուլէին միոյն կէսն վերուստ ի վայր փլաւ, զոր և աչօք տեսի. երկուցն ևս մի մի անկիւնքն ի վերին կողմն փլան. և 2 հովիւք ի փլատակսն կորեան. բազում մինարէից չէրիֆէէն ի վեր փլան. և ոմանք ծռեցան, և կէսք բոլորովին փլան. չարսըն և խաներուն պատերն ճաթռտեցան, ոմանք խանք և բաղնիք փլան. սուլթան մէհէմմէտ ճամիսին գրեթէ պէրպատ եղև. բխերիկք բազում փլան. ի ստամպօլ աւելի քան զհինգ հարիւր ոգիս ի փլատակսն կորեան։ Հողոյ պատառումն շարժմանս այս եղև ի յատապազարն, որ ատապազար բոլորովին ամենայն շինուածովքն և մարդկամբն կորեալ են, և ի տեղին ջուր բղխեալ է։ Ցայն ատապազարին կողմանս և այլ գիւղք աւեր եղեալ են, և անհամար ոգիք մեռեալ։ Այս 15 օր է, դեռ շարժն ոչ դադարի. յամենայն օր մի կամ երկու և երեք անգամ փոքր փոքր շարժք լինին։...

Ցամի տեառն 1754 — **Նուաստ ծառայ**
Սեպտեմբերի 17 — **Հայր Զաքարիայ**
[**Կ. Պոլիս**]

ԾՀԷ.

Սուլթան Օսման Գ.ի թագաւորութեան շրջանին մէջն ենք։ Նոր մեծ վէզիրը «Հէքիմօղլու Ալի փաշան՝» Բէօթահիայի կուսակալ Հէքիմզատէ կոչուածն է, որ այդ ժամանակին՝ միակն էր իբր արժանաւորագոյնը եպարքոսութեան պատուոյն։

Գալով սաստկասաստոյց ցրտութեան՝ բնաւ չափազանցութիւն չի կայ Հ. Զաքարիայի Նամակին մէջ, որովհետև սոյն եղանակին արտասովոր դէպքը պատմութեան մէջն ալ ակնարկուած է։

Գերամեծար գերյարգելի Արքահօր մերոյ և Բարեմապետի
Տեառն Տեառն Մտեփաննոսի վարդապետի՝ խնդալ ի տէր

Թուղթ ԽԱ.

... ի Ցունվարի 19 եղև դարձեալ գետնաշարժ մեծ յստամպօլ. և միայն ի պալըխպազարն մասն ինչ ի բերդէ քաղաքին փլաւ։... Սէրգիս վարդապետն՝ որ այտի եկն, և կայ և բնակի ի պատրիարքանոցն մինչև ցայսօր ոչ խօսեցաւ և ոչ խօսի զբան ինչ ընդդէմ մեր. նա մանաւանդ որպէս լսեմ զբարիս խօսի զմէնջ և զվանքէն, երկու և երեք անգամ միջնորդութեամբ մերոց ուղղափառ եղբարց զողջոյն սիրոյ մատուցեալ է ինձ. դեռ չեմ տեսեալ զնա և խօսակցեալ ընդ նմա։ Ի փետրվարի 4 փոխեցին զվէզիրն և զայլ ոմն եդին ի տեղւոջ նորա, այսինքն է զհէքիմօղլու ալի փաշան, որ յամս մեռեալ թագաւորին երկու անգամ վէզիր եղեալ էր. և այս երրորդ անգամ է, որ վէզիր եղև. բայց դեռ ոչ էհաս յստամպօլ, այլ ի ճանապարհի է տրապիզոնոյ գալ այսր. ամենեքեան ասեն թէ երեք անգամ վէզիր եղեալ ոչ զոք գիտեմք։ Ցայս ամ եղև սաստիկ ձմեռն և պաղ. աստ յստամպօլ այնչափ մինչև սառեցաւ ծովն քաղըթխանային. և ի վերայ սառին քայլելով մարդիկ անցին ի խասս քէօյէն ի պալատ։ Հայր Վրթանեսենց տանն առաջի ծովն ևս սառեցաւ մինչև ի դրացեաց տան նոցա մանկունք քայլէին ի վերայ ծովուն և երթային եկանէին ի Ֆէնէրին իսկէլէն։ Ի ուսումէլի և ի յանատօլու ևս որ-